ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 288

ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N 13 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Վահագն Մակարյանի դիմումը՝ որոշում եմ

Քաղաքացիներ Վարազդատ, Վահագն, Վազգեն Մակարյաններին և Սառա Համբարձումյանին պատկանող 80.2 քմ բնակարանին (սեփականության վկայական թիվ 0169244), նախկին գ. Քասախ հասցեի փոխարեն տրամադրել Գ. Նժդեհի փողոց շենք 3 բնակարան 20 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 30
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 289

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 262 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝ որոշում եմ

1.Քասախ համայնքի ղեկավարի 2017թվականի հոկտեմբերի 5-ի «Քասախի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ատեստավորում անցկացնելու մասին» N 262 որոշման 2-րդ և 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

2. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ Փառանձեմ Սեյրանի Ալոյանի վրա:

3. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Արմինե Սենիկի Մարտիրոսյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

20 17թ. հոկտեմբերի 30
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 290

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 143-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին,3-րդ, 13-րդ և 15-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N 01/15/6440-17 հանձնարարականը **որոշում եմ**

1.Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-2) համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայնհավելված3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

20 17թ. հոկտեմբերի 30
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 291

2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջները. ***որոշում եմ***

2017 թվականի նոյեմբերի 2-ին ժամը 11[00] հրավիրել Քասախ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1.Քասախ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 28-ի N 61-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Համայնքային սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականությանը փոխանցելու մասին

3. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման թույլտվություն տալու և վարձավճարի չափը սահմանելու մասին

4. Քասախ համայնքի ավագանու 2017թվականի հուլիսի 31-ի N 38 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայքի համայնքային սեփականություն համարվող գույքի և հողերի օտարելու թույլտվություն տալու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 31
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 292

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ ի կողմից 31.10.2017 թվ. ին տրված տեղնիկական եզրակացությունը, այն, որ քաղաքացիներ Սարգիս Կարապետի Սարգսյանի և Արմենուհի Սարգսյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0150- կադաստրային ծածկագրում 0,050 հա արտադրական կառուցապատման հողամասի վրա (սեփականության վկայական թիվ 2186177) քաղաքացի Սարգիս Կարապետի Սարգսյանի կողմից կառուցված արտադրական նշանակության գրասենյակը, չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60 հոդվածով սահմանված հողամասի վրա ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան չի հակասում փողոցի ճարտարապետական ընդհանուր նկարագրին ու կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ, նույն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի, ինչպես նաև Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 9 որոշման պահանջներով՝ որոշում եմ

1. Օրինականացնել Աշտարակի խճուղի թիվ 36 հասցեում գտնվող, քաղաքացիներ Սարգիս Կարապետի Սարգսյանի և Արմենուհի Սարգսյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0150- կադաստրային ծածկագրում 0,050 հա արտադրական կառուցապատման հողամասի վրա (սեփականության վկայական թիվ 2186177) քաղաքացի Սարգիս Կարապետի Սարգսյանի կողմից կառուցված արտադրական նշանակության գրասենյակը 132.16 քմ արտաքին ընդհանուր մակերեսով(ներքին մակերեսը՝ 101.34 քմ):
2. Առաջարկել քաղաքացի Սարգիս Կարապետի Սարգսյանին օրինականացված գրասենյակի համար 60 օրյա ժամկետում վճարել 132.16x15000x0.26=515424 դրամ:
3. 60 օրյա ժամկետում սույն վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 01
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 293

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի 2018 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով՝ որոշում եմ

1.Քասախի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնին և բյուջետային հիմնարկների ղեկավարներին մինչև 2017 թվականի նոյեմբերի 20-ը ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը, հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու համար:

2. Ապահովել 2018 թվականի ընթացքում իրականացվելիք ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 02
Գ.Քասախ